ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
Հայաստանի ազգային ագրարային համալսարան
AGRISCIENCE AND TECHNOLOGY АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ
Միջազգային գիտական պարբերական
ISSN 2579-2822

https://creativecommons.org/licenses/by-nc/4.0/ OPEN ACCESS

ՀՏԴ 615:618.7
doi: 10.52276/25792822-2025.3-209

ԿՈՎԵՐԻ ՀԵՏԾՆՆԴՅԱՆ ՊԱՐԵԶԻ ԲՈՒԺՈՒՄՆ ԸՍՏ ՆՈՐ ՍԽԵՄԱՅԻ

Աստղիկ Բադալյան *ան.գ.թ.*, **Կարինե Սուքիասյան** *ան.գ.թ.*, **Վրեժ Խոցանյան**, **Էրիկ Նիկողոսյան** *ան.գ.թ.*

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

astgihk_badalyan@mail.ru, karinesuqiasyan58@gmail.com, vrezhvk@gmail.com, erik-nik69@yandex.ru

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝
արյան շիճուկ,
բուժման սխեմա,
կենսաքիմիական ցուցանիշներ,
կով,
հետծննդյան պարեզ

Շահերի հայտարարագիր

Հեղինակները հայտարարում են, որ այս հոդվածի հետազոտության, հեղինակության և/կամ հրապարակման հետ կապված շահերի բախում առկա չէ:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հետծննդյան պարեզով հիվանդ կովերի մոտ ուսումնասիրվել է հիվանդության ընթացքը: Հիվանդ կենդանիների արյան շիճուկում ընդհանուր սպիտակուցի, գլյուկոզի, կալցիումի և ֆոսֆորի պարունակությունը հետազոտվել է երկու սխեմայով: 1-ին սխեմայով կենդանիներին ներարկվել են գլյուկոզի և կալցիումի քլորիդի լուծույթների խառնուրդ (ներերակային), կոֆեին (ենթամաշկային), 2-րդ սխեմայով՝ կոֆեին (ենթամաշկային), պրոզերին, դեքսամետազոն (ներմկանային), գլյուկոզի, կալցիումի քլորիդի, դեքսամետազոնի և ղանձլամերի լուծույթների խառնուրդ (ներերակային): Բուժման երկու սխեմաները դրական ազդեցություն են գործել արյան կենսաքիմիական ցուցանիշների և կենդանիների առողջական վիճակի վրա: Հատկապես բուժման բարձր արդյունավետություն և լիարժեք ապաքինում է ապահովել մեր կողմից առաջարկվող 2-րդ սխեման:

Նախաբան

Հետծննդյան պարեզը կաթնատու կովերի վտանգավոր հիվանդություն է, որը զարգանում է ծննդաբերությունից հետո և ընթանում է երկու ձևով՝ տիպիկ և ոչ տիպիկ: Հիվանդության տիպիկ ձևն արտահայտվում է կաթվածահարության ակնհայտ կլինիկական դրսևորումներով և առավել հաճախ է հանդիպում կենդանիների մոտ: Ոչ տիպիկ ձևն արտահայտվում է թեթև թուլությամբ և հազվադեպ է գրանցվում: Ընդհանուր առմամբ հետծննդյան պարեզն ուղեկցվում է ընկճվածությամբ, արտաքին գրգռիչների նկատմամբ անտարբերությամբ, ախորժակի անկումով, մարսողական համակարգի գործունեության խանգարումով, մկանային դողով, երերուն քայլվածքով, վերջույթների, լեզվի և մարսողական համակարգի օրգանների կաթվածահարությամբ, կենդանիները հիմնականում պառկած են լինում, չեն կարողանում ոտքի կանգնել: Անասնաբուժի միջամտության բացակայության դեպքում առաջին 24 ժամվա ընթացքում զարգանում է կտրիչի փքանք կամ ասպիրացիոն բրոնխոպնևմոնիա:

Հետծննդյան պարեզի հիմնական պատճառներն են չբալանսավորված կերակրումը, սթրեսային գործոնների ազդեցությունը, գերկերակրումը, սպիտակուցային և ածխաջրատային փոխանակության խանգարումները, կալցիումի և ֆոսֆորի անբավարարությունն ու հարաբերակցության խախտումը, ինչը պայմանավորված է հղիության վերջին ամիսներին պտղի աճի ժամանակ դրանց ծախսի ավելացումով (Архипов, 2015, Баймишев, 2021, Быстрова и др., 2020, Горбачев, 2019, Герасименко и др., 2022, Заблоцкая, Черемуха, 2023, Ленкова, 2022, Малыгина, Тарасов, 2020, Полянцев, Афанасьев, 2022, Фролова, Козлов, 2022, Корочкина и др., 2015):

Կովերի հետծննդյան պարեզի բուժումը գերակա խնդիր է: Հիպոկալցեմիան, արյան մեջ գլյուկոզի, ընդհանուր սպիտակուցի ցածր պարունակությունը կարող են նպաստել այնպիսի ախտաբանությունների զարգացմանը, ինչպիսիք են արգանդի արտանկումը, ընկերքի պահումը, մետրիտների առաջացումը, կաթնատվության նվազումը և օրգանիզմի ընդհանուր դիմադրողականության անկումը (Корочкина и др., 2017, Остякова и др., 2016, Пилейко и др., 2011, Braun, et al., 2022, Tsiamadis, et al., 2016):

Նյութը և մեթոդները

Հետազոտության նպատակն է մշակել կովերի հետծննդյան պարեզի բուժման նոր համալիր սխեմա: Հետազոտությունները կատարվել են 2023-2024 թթ., Շիրակի մարզի Արթիկ քաղաքի և Մեծ Մանթաշ գյուղի անասնապահական տնտեսություններում: Փորձերի համար ընտրվել են կովկասյան գորշ ցեղի 3-4 տարեկան ծննդաբերած կովեր (18 գլուխ): Հետծննդյան պարեզի ախտորոշումը կատարվել է կլինիկական հետազոտության միջոցով:

Կենդանիները համանմանության սկզբունքով բաժանվել են 3 խմբի՝ յուրաքանչյուրում 6 կով: Ստուգիչ խմբում ընգրկված առողջ կենդանիները որևէ բուժում չեն ստացել: 1-ին և 2-րդ փորձնական խմբերում ընդգրկվել են հետծննդյան պարեզով հիվանդ կենդանիներ: 1-ին փորձնական խմբի կենդանիների բուժումն իրականացվել է 1-ին սխեմայով. առաջին օրը կովերին ներերակային ներարկվել է 300 մլ գլյուկոզի 40 %-անոց լուծույթին միախառնված 150 մլ կալցիումի քլորիդի 10 %-անոց լուծույթ, ներարկումը կատարվել է դանդաղ, ենթամաշկային ներարկվել է 20 մլ կոֆեինի 20 %-անոց լուծույթ: 2-րդ փորձնական խմբի կենդանիների բուժման նպատակով կիրառվել է մեր կողմից մշակված բուժման 2-րդ սխեման. ենթամաշկային ներարկվել է 20 մլ կոֆեինի 20 %-անոց լուծույթ, ներմկանային՝ 6-7 մլ պրոզերին (ըստ կենդանի զանգվածի), ներերակային՝ 300-400 մլ գլյուկոզի 40 %-անոց լուծույթին միախառնված 140-150 մլ կալցիումի քլորիդի 10 %-անոց լուծույթ և 1 մլ դեքսամետազոն, ներարկումը կատարվել է դանդաղ: Ներերակային ներարկումից հետո ներմկանային ներարկվել է 3 մլ դեքսամետազոն: Ներերակային խառնուրդի ծավալի կեսը ներարկելուց հետո մնացած լուծույթին ավելացվել է 0,5 մլ ղանձլամերի լուծույթ: Ներարկումը կատարվել է դանդաղ՝ նախաստամոքսների ինտենսիվ կծկումներից խուսափելու համար:

Մարմնի ջերմաստիճանի անկումը բացառելու համար 20 րոպե ընդմիջումներով կատարվել են չափումներ, կենդանիներին ծածկել են ծածկոցով և տաքացրել տաքացուցիչով: Այնուհետև կալիումի պերմանգանատի թույլ լուծույթով կատարվել են մաքրող գոլ հոգնաներ (30-40 րոպե ընդմիջումներով): Երկու փորձնական խմբերում էլ կենդանիների բուժումը տևել է 1 օր:

Առողջ և հետծննդյան պարեզով հիվանդ կովերի արյան շիճուկում ընդհանուր սպիտակուցի, գլյուկոզի, կալցիումի և ֆոսֆորի պարունակությունը որոշվել է Biosistems A15 անալիզատորի միջոցով: Հետծննդյան պարեզ ունեցող 18 գլուխ կովերի մոտ նշված ցուցանիշները ուսումնասիրվել են մինչև բուժումը և բուժման ավարտին: Յուրաքանչյուր խմբից հետազոտվել է 6-ական արյան նմուշ:

Բուժումից 1 ամիս անց ընդհանուր սպիտակուցի, գլյուկոզի, կալցիումի և ֆոսֆորի պարունակության վրա բուժման 1-ին և 2-րդ սխեմաների ազդեցության շարունակականությունը ստուգելու նպատակով իրականացվել են բուժված բոլոր կենդանիների արյան կրկնակի կենսաքիմիական հետազոտություններ:

Արդյունքները և վերլուծությունը

Հետծննդյան պարեզով հիվանդ կենդանիների մոտ նկատվել են ընկճվածություն, ախորժակի բացակայություն, մարմնի ջերմաստիճանի նվազում, բրադիկարդիա, թույլ անոթազարկ: Բացի այդ՝ հիվանդ կենդանիները չեն կարողանում կանգնել, հրաժարվում են կերից, վերջույթները սառն են: Հարթ մկանների պարալիզը հանգեցրել է մարսողական համակարգի ատոնիայի, կտրիչի փքանքի, կղման բացակայության: Միզապարկը լիքն է, բայց միզարտազատում չի կատարվում: Կենդանիները գլուխը հենում են կողերին, նկատվում է պարանոցի S-աձև թեքություն, աստիճանաբար կորցնում են գիտակցությունը և ընկնում կոմայի մեջ, բացակայում է արտաքին գրգռիչների նկատմամբ ռեակցիան (ասեղով ծակելիս ոչինչ չեն զգում):

Ըստ աղյուսակ 1-ի տվյալների՝ 1-ին և 2-րդ փորձնական խմբերի կովերի արյան շիճուկում մինչև բուժումը հայտնաբերվել է կալցիումի, ֆոսֆորի, գլյուկոզի և ընդհանուր սպիտակուցի քանակության խիստ նվազում, մինչդեռ ստուգիչ խմբի կենդանիների մոտ բոլոր ցուցանիշները գտնվել են նորմայի սահմաններում:

Մինչև բուժումը 1-ին և 2-րդ փորձնական խմբերի կովերի արյան շիճուկում ընդհանուր սպիտակուցի պարունակությունը համապատասխանաբար 23,1 և 34 %-ով ցածր է եղել առողջ կենդանիների այդ նույն ցուցանիշից: Բուժումից 3 օր անց 1-ին փորձնական խմբի կովերի արյան շիճուկում ընդհանուր սպիտակուցի պարունակությունն ավելացել է 8,4 %-ով, ինչը 21 %-ով պակաս է առողջ կենդանիների նույն ցուցանիշից, իսկ 2-րդ փորձնական խմբի կովերի արյան շիճուկում ավելացել է 37,2 %-ով (մինչև բուժումը գրանցված ցուցանիշի համեմատ) և կազմել է 79,4 գ/լ, ինչը մոտ է առողջ կենդանիների նույն ցուցանիշին:

Մինչև բուժումը 1-ին և 2-րդ փորձնական խմբերի կովերի արյան շիճուկում գլյուկոզի պարունակությունը համապատասխանաբար 48,1 և 56 %-ով ցածր է եղել առողջ կենդանիների նույն ցուցանիշից: Բուժումից 3 օր անց 1-ին փորձնական խմբի կովերի արյան շիճուկում գլյուկոզի պարունակությունն ավելացել է 30 %-ով, ինչը 28,6 %-ով պակաս է առողջ կենդանիների մոտ գրանցված ցուցանիշից: 2-րդ փորձնական խմբի կովերի արյան շիճուկում գլյուկոզի մակարդակը մինչև բուժումը գրանցված տվյալների համեմատ ավելացել է 2,4 անգամ և կազմել 2,9 մմոլ/լ, ինչը նույնպես մոտ է առողջ կենդանիների նույն ցուցանիշին:

Աղյուսակ 1. Կովերի արյան շիճուկում կենսաքիմիական որոշ ցուցանիշների փոփոխությունները մինչև բուժումը և բուժումից հետո**

Հետազոտման օրեր	Խմբեր	Ընդհանուր սպիտակուց, գ/լ	Գլյուկոզ, մմոլ/լ	Կալցիում, մմոլ/լ	Ֆոսֆոր, մմոլ/լ
Մինչև բուժումը	1-ին փորձնական, n=6	58,1±2,76*	1,4±0,11*	1,7±0,11*	0,7±0,04
	2-րդ փորձնական, n=6	49,9±1,91*	1,2±0,11*	1,4±0,11*	0,6±0,05
	Ստուգիչ, n=6	75,5±3,6	2,7±0,28	2,5±0,18	2,3±0,15
Բուժումից 3 օր անց	1-ին փորձնական, n=6	63,4±2,33*	2,0±0,28*	2,1±0,14*	1,8±0,23
	2-րդ փորձնական, n=6	79,4±3,60*	2,9±0,60*	2,6±0,23*	2,4±0,20
	Ստուգիչ, n=6	80,1±2,74	2,8±0,23	2,2±0,20	2,2±0,15

*P<0,05

**Կազմվել է հեղինակների կողմից:

Աղյուսակ 2. Կովերի հետծննդյան պարեզի բուժման տարբեր սխեմաների համեմատական արդյունավետությունը*

Բուժման սխեմաներ	Խմբեր	Բուժվել են	Առողջացել են	Կենդանիների առողջացումը, %
Առաջին սխեմա (1-ին փորձնական խումբ)	1	6	4	66,67 %
Երկրորդ սխեմա (2-րդ փորձնական խումբ)	1	6	6	100 %

*Կազմվել է հեղինակների կողմից:

Մինչև բուժումը 1-ին և 2-րդ փորձնական խմբերի կովերի արյան շիճուկում կալցիումի պարունակությունը համապատասխանաբար 32 և 44 %-ով ցածր է եղել առողջ կենդանիների այդ նույն ցուցանիշից: Բուժումից 3 օր անց 1-ին փորձնական խմբի կովերի արյան շիճուկում կալցիումի պարունակությունն ավելացել է 19 %-ով և կազմել 2,1 մմոլ/լ, ինչը մոտ է առողջ կենդանիների մոտ գրանցված ցուցանիշին: 2-րդ փորձնական խմբի կովերի արյան շիճուկում կալցիումի մակարդակը մինչև բուժումը գրանցված տվյալների համեմատ ավելացել է 46,2 %-ով, ինչը 18,2 %-ով բարձր է առողջ կենդանիների նույն ցուցանիշից:

Մինչև բուժումը 1-ին և 2-րդ փորձնական խմբերի կովերի արյան շիճուկում ֆոսֆորի պարունակությունը համապատասխանաբար 69 և 74 %-ով ցածր է եղել առողջ կենդանիների նույն ցուցանիշից: Բուժումից 3 օր անց 1-ին փորձնական խմբի կովերի արյան շիճուկում ֆոսֆորի պարունակությունն ավելացել է 18,2 %-ով, 2-րդ փորձնական խմբի կովերի արյան շիճուկում՝ 9 %-ով, առողջ կենդանիների նույն ցուցանիշի համեմատ կազմելով համապատասխանաբար 1,8 և 2,4 մմոլ/լ:

Բուժումից հետո կենդանիների կենսաքիմիական նշված ցուցանիշները գտնվել են նորմայի սահմաններում:

Առողջացման շրջանում նկատվել են մկանակազմի կծկումներ: Վերականգնվել են նախաստամոքսների կծկումները, որոնք վերահսկվել են ձախ սովափոսի հատվածում ֆոնենդոսկոպով լսումների միջոցով: Վերականգնվել է նաև զգայունությունը, ընդլայնվել է ցավազգացության դաշտը (գլխի հատվածից դեպի հետ՝ մինչև կճղակների հատվածը), ինչը ստուգվել է ասեղով մաշկը ծակելու միջոցով: Այնուհետև վերականգնվել են կղանքի արտաթորումը և միզարտազատությունը, իսկ երբ մարմնի ջերմաստիճանը հասել է մինչև 38,5-39,5 ºC, վերականգնվել է նաև ամբողջ մարմնի ցավազգացությունը՝ մինչև պոչի վերջնամասը և կճղակները: 20-25 րոպե հետո կենդանիները կարողացել են ինքնուրույն բարձրանալ պառկած տեղից: Կերակրումը կատարվել է լավորակ չոր խոտով և քիչ քանակությամբ խտացված կերով:

Կովերին սկսել են կթել վիճակի կայունացումից 40-60 րոպե անց՝ նախապես գոլ ջրով կուրծը լվանալուց և չորացնելուց հետո: Այնուհետև հատակը չորացվել է, ծածկվել չոր խոտի մանր մնացորդներով, և կենդանիները հնարավորություն են ստացել ազատ տեղաշարժվել:

Ըստ աղյուսակ 2-ի՝ 1-ին փորձնական խմբի բուժում ստացած 6 կենդանիներից ապաքինվել են 4-ը (66,7 %), իսկ 2-րդ փորձնական խմբից ապաքինվել են բոլոր 6 կենդանիները, այսինքն՝ 100 %-ը:

Աղյուսակ 3. Բուժված կենդանիների արյան կենսաքիմիական հետազոտությունների արդյունքները բուժումից 1 ամիս անց**

Ցուցանիշներ	1-ին փորձնական խումբ (1-ին սխեմայով բուժված կենդանիներ), n=6	2-րդ փորձնական խումբ (2-րդ սխեմայով բուժված կենդանիներ), n=6	Նորմա
Ընդհանուր սպիտակուց, գ/լ	70,5±3,14*	81,6±3,41*	59-82
Գլյուկոզ, մմոլ/լ	3,3±0,52*	3,9±0,45*	3,6-4,0
Կալցիում, մմոլ/լ	2,5±0,34*	3,0±0,25*	2,1-3,1
Ֆոսֆոր, մմոլ/լ	1,8±0,28*	2,7±0,10*	1,4-2,9

*P<0,05

**Կազմվել է հեղինակների կողմից:

Այսպիսով՝ կովերի հետծննդյան պարեզի բուժման՝ մեր կողմից առաջարկված 2-րդ սխեման թույլ է տալիս կենդանիներին դուրս բերել կոմատոզ վիճակից, արագ վերականգնել նյարդային, ստամոքսաաղիքային, միզարտազատիչ համակարգերի գործունեությունը և ապահովում է լիարժեք ապաքինում:

Աղյուսակ 3-ում ամփոփված տվյալների համաձայն՝ 1-ին և 2-րդ սխեմաներով բուժված կենդանիների մոտ բուժման ավարտից 1 ամիս անց լիովին վերացել են հիպոպրոտեինեմիայի, հիպոգլիկեմիայի, հիպոկալցեմիայի և հիպոֆոսֆորեմիայի երևույթները: Բոլոր կենդանիների մոտ ընդհանուր սպիտակուցի, գլյուկոզի, կալցիումի և ֆոսֆորի պարունակությունը ֆիզիոլոգիական արժեքների սահմաններում է: Ընդ որում՝ 2-րդ սխեմայով բուժված կենդանիների մոտ նշված ցուցանիշները գտնվում են նորմայի վերին սահմանում:

Եզրակացություն

Կովերի հետծննդյան պարեզի բուժման նպատակով կիրառվող երկու սխեմաներն էլ դրական ազդեցություն են գործում հիվանդ կենդանիների արյան կենսաքիմիական ցուցանիշների և առողջական վիճակի վրա: Սակայն հարկ է նշել, որ մեր կողմից առաջարկվող բուժման 2-րդ սխեման կարճ ժամանակում կարգավորում է հիվանդ կենդանիների սպիտակուցային, ածխաջրատային նյութափոխանակությունը, վերականգնում է նյարդային, ստամոքսաղիքային, միզարտազատիչ համակարգերի գործունեությունը և ապահովում է 100 % ապաքինում: Մինչդեռ 1-ին սխեմայով բուժված կենդանիներն ապաքինվում են 66,67 %-ով:

1-ին և 2-րդ սխեմաներով բուժումից մեկ ամիս անց կենդանիների արյան կենսաքիմիական ցուցանիշների կրկնակի հետազոտությունների համաձայն՝ բուժված բոլոր կենդանիների մոտ սպիտակուցի, գլյուկոզի, կալցիումի և ֆոսֆորի պարունակությունը գտնվում է նորմայի սահմաններում: 2-րդ սխեմայով բուժված կենդանիների մոտ գրանցված ֆիզիոլոգիական բարձր ցուցանիշները վկայում են, որ բուժման 2-րդ սխեման ապահովում է շարունակական դրական ազդեցություն և նպաստում է հետծննդյան պարեզով հիվանդ կովերի լիարժեք ապաքինմանը:

Բուժման երկրորդ սխեմայի արդյունավետությունը պայմանավորված է կոֆեինի՝ սրտի թուլացած գործունեությունը ակտիվացնելու, սրտամկանի կծկողունակությունը խթանելու, անոթազարկը կարգավորելու հատկությամբ, պրոզերինի՝ պարեզների դեպքում մկանների տոնուսը և կծկողունակությունը բարձրացնելու ունակությամբ, կալցիումի քլորիդի, դեքսամետազոնի և գլյուկոզի՝ հակատոքսիկ, դիմադրողականությունը բարձրացնող, նյութափոխանակությունը կարգավորող ազդեցությամբ, ղանձլամերի թուրմի՝ կտրիչի թուլացած կծկողունակությունը բարձրացնելու հատկությամբ:

Գրականություն

1. Архипов А. В. Что мы знаем о родильном парезе у коров // Зоотехния. - 2015. - N 6. - С. 22-24.
2. Баймишев Х. Б. Акушерство и гинекология: учебное пособие. - Самара: СамГАУ, 2021. - 400 с.
3. Быстрова И. Ю., Киселева Е. В., Герцева К.А. Распространение и факторы риска развития послеродовой гипокальциемии у крупного рогатого скота // Вестник Рязанского государственного агротехнологического университета им. П. А. Костычева. - 2020. - N 4 (48). - с. 10-16.
4. Горбачев В. А. Послеродовой парез у крупного рогатого скота // Современные направления развития науки в животноводстве и ветеринарной медицине: сборник статей, посвященный 60-летию кафедры технологии производства и переработки продуктов животноводства и 55-летию кафедры иностранных языков. - 2019. - С. 87-91.
5. Герасименко С. Ф., Панская А. А., Богатырь М. В. Методы лечения и профилактики послеродового пареза у крупного рогатого скота // Тенденции развития науки и образования. - 2022. - N 87(2). - С. 120-121.

6. Заблоцкая А. П., Черемуха Е. Г. Лечение и профилактика послеродового пареза крупного рогатого скота // Ветеринария. - 2023. - N 2. - С. 54-55.

7. Корочкина Е. А., Романенко Л. В., Анипченко П.С. К вопросу о родильном парезе коров и мерах его профилактики // Генетика и разведение животных. - 2017. - N 3. - С. 83-86.

8. Корочкина Е. А., Племяшов К. В., Виденин В. Н. Современный способ профилактики гипокальциемии высокопродуктивных коров в послеотельный период // Международный вестник ветеринарии. - 2015. - N 1. - С. 21-25.

9. Ленкова Н. В. Метаболический стресс у коров при родильном парезе // Вестник РГАТУ. - Том 14. - N 2. - 2022. - С. 50-56.

10. Малыгина Н. А., Тарасов Д. А. Специфическая профилактика послеродового пареза коров // Аграрная наука - сельскому хозяйству: сборник материалов XV Международной научно-практической конференции в 2 кн. - 2020. - С. 323-324.

11. Остякова М. Е. Мелкова Н. Н. Ирхина В. К., Голайдо Н. С. Послеродовая гипокальциемия коров и ее профилактика // Дальневосточный аграрный вестник. - 2016. - N 3 (39). - С. 22-29.

12. Пилейко В. В., Мацинович А. А., Рыбаков Ю. А. Профилактика и лечение при родильном парезе коров в условиях беспривязного содержания // Ученые записки учреждения образования Витебская ордена Знак почета государственная академия ветеринарной медицины. - 2011. - Т. 47. - N 1. - С. 225-229.

13. Полянцев. Н. И., Афанасьев А. И. Акушерство, гинекология и биотехника размножения животных: учебник. - С-Пб: Лань, 2022. - 400 с.

14. Фролова О. С., Козлов С. В. Послеродовой парез у крупного рогатого скота: признаки болезни. Факторы, способствующие формированию болезни, и меры ее профилактики // Проблемы и пути развития ветеринарной и зоотехнической наук: сборник Междунар. научно-практ. конф. обучающихся, аспирантов и молодых ученых, посвящ. памяти заслуженного деятеля науки, доктора ветеринарных наук, профессора кафедры “Болезни животных и ветеринарно-санитарная экспертиза” Колесова Александра Михайловича. - Саратов, 2022. - С. 130-137.

15. Braun, U., Buchli, H., & Hässig, M. (2017). Eating and rumination activities two weeks prepartum to one month postpartum in 100 healthy cows and cows with peripartum diseases. Schweizer Archiv für Tierheilkunde, 159(10), 535-544. https://pubmed.ncbi.nlm.nih.gov/28952961/.

16. Tsiamadis, V., Banos, G., Panousis, N., Kritsepi-Konstantinou, M., Arsenos, G., & Valergakis, G. E. (2016). Genetic parameters of subclinical macromineral disorders and major clinical diseases in postparturient Holstein cows. Journal of Dairy Science, 99(11), 8901-8914. https://doi.org/10.3168/jds.2015-10789.

Лечение послеродового пареза коров по новой схеме

Астхик Бадалян, Карине Сукиасян, Вреж Хоцанян, Эрик Никогосян

Национальный аграрный университет Армении

Ключевые слова: *биохимические показатели, корова, послеродовой парез, схема лечения, сыворотка крови*

Аннотация. У больных послеродовым парезом коров изучено течение заболевания. Содержание общего белка, глюкозы, кальция и фосфора в сыворотке крови больных животных исследовали по двум схемам. Согласно 1-й схеме животным вводили смесь растворов глюкозы и хлорида кальция (внутривенно), кофеин (подкожно), по 2-й схеме – кофеин (подкожно), Прозерин, Дексаметазон (внутримышечно), смесь растворов глюкозы, хлорида кальция, Дексаметазона и Гандзламера (внутривенно). Обе схемы лечения оказали положительное влияние на биохимические показатели крови и состояние здоровья животных. Особенно высокую эффективность лечения и полное выздоровление обеспечила предложенная нами 2-я схема.

A New Treatment Scheme for Postpartum Paresis in Cows

Astghik Badalyan, Karine Sukiasyan, Vrezh Khotsanyan, Erik Nikoghosyan
Armenian National Agrarian University

Keywords: *biochemical parameters, blood serum, complex treatment scheme, cow, postpartum paresis*

Abstract. We investigated the course of the disease before and after treatment, as well as the concentrations of totalprotein, glucose, calcium, and phosphorus in the blood serum of cows affected by postpartum paresis. Prior to treatment, the levels of these parameters in the blood serum of affected animals were below normal values.Two treatment regimens were applied for the management of postpartum paresis in cows. Under the first regimen, animals received an intravenous mixture of glucose and calcium chloride solutions, along with subcutaneous administration of caffeine. The second treatment regimen included subcutaneous caffeine; intramuscular administration of proserin and dexamethasone; and intravenous administration of a mixture of glucose, calcium chloride, dexamethasone, and hellebore solutions.The results showed that both treatment regimens had a positive effect on the normalization of total protein, glucose, calcium, and phosphorus levels in blood serum, as well as on the overall clinical condition of the animals. Notably, the second treatment regimen demonstrated superior therapeutic efficacy, with full recovery observed in all treated animals (6 out of 6; 100 %).

Ստացվել է՝ 11.03.2025 թ.
Գրախոսվել է՝ 09.04.2025 թ.
Ընդունվել է՝ 30.09.2025 թ.